ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետը՝ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա, սեպտեմբեր 24 թվակիր Իր գրությամբ դիմել է Կաթողիկե Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն Տ. Տ. Պավղոս Զ Պապին, Համայն Ռուսիո Պատրիարք Ն. Սրբություն Տ. Տ. Ալեքսիին, Քենտրբերիի Արքեպիսկոպոս Նորին Գերաշնորհություն դոկտ. Մայքլ Ռեմզիին և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար հայր դոկտ. Վիսեր դ' Հուֆտին, հրավիրելով քրիստոնեական քույր եկեղեցիները, որպեսզի առաջիկա տարի ապրիլի 24-ին մասնակցեն Հայ Եկեղեցու և ժողովրդի մեծ սուգին, աղոթելով մոտ երկու միլիոն հայերի հոգվոց համար, որոնք նահատակվեցին Արևմտյան Հայաստանում, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
26 սեպտեմբերի 1964 թ.